Նախապես հաստատվել է

<<ԷԷՀՕ>> ՓԲԸ խորհրդի 2019թ. մայիսի 03 նիստում
Խորհրդի նախագահ

Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Հաստատվել է

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

Ս. Պապիկյան

# <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> ՓԲԸ

# 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

I. Տեղեկատվություն Ընկերության, նրա կառավարման մարմինների մասին

II. Արտադրական գործունեություն

III. Ֆինանսատնտեսական գործունեություն

IV. Աշխատանք և աշխատավարձ

V. Եզրափակիչ դրույթներ

VI. Հավելվածներ

# I. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

| | | |
|---|---|---|
| *անվանումը՝* | | |
| *հայերեն լրիվ* | - | <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատո>> փակ բաժնետիրական ընկերություն |
| *կրճատ* | - | <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> ՓԲԸ |
| *ռուսերեն* | - | Закрытое акционерное общество <<Оператор электроэнергетической системы>> |
| *կրճատ* | - | ЗАО <<Оператор электроэнергетической системы>> |
| *անգլերեն լրիվ* | - | <<Electro power systems operator>> Closed joint-stock company |
| *կրճատ* | - | <<Electro power systems operator>> CJSC |
| *հասցեն՝* | - | ՀՀ, 0009, Երևան, Աբովյան փողոց 27 |
| *հեռախոս՝* | - | (+37410) 524725 |
| *ֆաքս՝* | - | (+37410) 547317 |
| *էլ.փոստ՝* | - | office@energyoperator.am |
| *ինտերնետային կայք՝* | - | www.energyoperator.am |
| *հարկ վճարողի հաշվառման համարը* | - | 01547732 |

*<<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> ՓԲԸ հաշվարկային հաշվի համարները՝*

| | |
|---|---|
| <<Արդշինբանկ>> ՓԲԸ | |
| <<Աղասյան>> մասնաճյուղ | 247460049700 |
| <<Արաբկիր>> մասնաճյուղ | 247120046906 |
| <<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ | |
| <<Մյասնիկյան>> մասնաճյուղ | 16044033655200 |

*Պետ.ռեգիստրում գրանցման համարը և ամսաթիվը՝*

27312003639, 05.11.2003թ., վկայական թիվ 03 Ա 062403

*Իրավակազմակերպական ձևը՝*

Փակ բաժնետիրական ընկերություն

## Ընկերության կորպորատիվ կառուցվածքը՝

ա) Բաժնետերերի ընդհանուր ժողով

բ) Խորհուրդ

գ) Խորհրդի հանձնաժողովներ (2018թ. ընթացքում չեն ստեղծվել)

դ) գործադիր մարմին:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1910747960 դրամ, որը կազմում է 316349 հատ հասարակ (սովորական) բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը՝ 6040 դրամ: Կանոնադրական կապիտալը նախորդ տարվա համեմատ աճել է համաձայն <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> ՓԲԸ-ի 2018թ. հունվարի 26-ի արտահերթ ժողովի որոշման, (հիմք՝ ՀՀ կառավարության 07.12.2017թ. թիվ 1557-Ա որոշում): Կանոնադրական կապիտալի փոփոխությունը սահմանված կարգով գրանցվել է Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում:

Բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, վճարված են նրա կողմից և կառավարվում են ՀՀ կառավարության և նրա լիազորված անձի՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի կողմից:

## ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՅՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը, որի համար իրավունք է տրված և պարտավորեցված էլեկտրաէներգետիկական համակարգում մատուցել էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայություն՝ հետևյալ գործառույթներով.

1. էլեկտրաէներգետիկական համակարգում կարճաժամկետ պլանավորում և կարգավարում.
2. էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատիվ կառավարում.
3. էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի զարգացման պլանավորում.
4. տարածաշրջանային էլեկտրաէներգետիկական համակարգերի հետ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի համատեղ աշխատանքի ապահովում.
5. Էլեկտրաէներգետիկական համակարգում՝ համաձայն Լիցենզիայի պայմանների և Շուկայի կանոնների, իր օպերատիվ ենթակայության ներքո գտնվող Ռելեական պաշտպանության և Հակավթարային ավտոմատիկայի սարքվածքների նախադրվածքների հաշվարկում, առաջադրում և դրանց կատարման վերահսկում.
6. հաճախականության և փոխհոսքերի կարգավորման, հաշվեկշռման, ինչպես նաև համակարգային ծառայություններ մատուցելու համար նախատեսված տեղակայանքների պատրաստականության ստուգում.
7. էլեկտրաէներգետիկական համակարգում կրիտիկական (վթարային) իրավիճակներում էլեկտրամատակարարման սահմանափակումների ծրագրերի կիրառման վերաբերյալ որոշումների կայացում.
8. հաղորդման ցանցին միացվող նոր կամ վերակառուցվող էներգատեղակայանքներ և սարքավորումների հաղորդման ցանցին միացնելու

տեխնիկական պայմանների և միացման գործողությունների ծրագրի վերաբերյալ համաձայնության տրամադրում.

9. էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական առևտրի խթանման և տարանցման ապահովման նպատակով համագործակցություն այլ երկրների համապատասխան կազմակերպությունների հետ.
10. Շուկայի կանոններով նախատեսված այլ գործառույթներ:

Լիցենզիայի պայմանների 5-րդ կետի 1-7-րդ ենթակետերով ամրագրված գործառույթները Լիցենզավորված անձն իրականացնում է բացառիկ իրավունքով:

Ընկերությունը կարող է զբաղվել օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով, ինչպես նաև լիցենզիայի (հատուկ թույլտվություն) առկայության դեպքում այլ գործունեությամբ:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշմամբ, Ընկերությանը տրված լիցենզիայի գործունեության ժամկետը 2015 թվականին երկարաձգվել է մինչև 2020թ. դեկտեմբերի 9-ը:

## ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

1. **Բաժնետիրոջ ընդհանուր ժողով՝** Ընկերության կառավարման բարձրագույն մարմին.

________________________ - ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարար, ընկերության բաժնետոմսերի կառավարման 100% լիազորությունները իրականացնող

Հաշվետու տարում գումարվել է մեկ տարեկան ընդհանուր ժողով (25.06.2018թ.) և երկու արտահերթ ժողով: Բոլոր ժողովները գումարվել են Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3 հասցեում:

2. **Խորհուրդ՝** Ընկերության կանոնադրության 13 հոդված (13.1-ից 13.7 կետեր)՝ սահմանում են Խորհրդի բացառիկ և պատվիրակված իրավասությունները:

### <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>><br>փակ բաժնետիրական ընկերության (ՓԲԸ) խորհրդի<br>Կ Ա Զ Մ Ը



**Արտաշես Կիրակոսյան**

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության գլխավոր քարտուղար



**Ռուբիկ Դավթյան**

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության պետի խորհրդատու

| | | |
|---|---|---|
|  | **Արամ Հարությունյան** | ՀՀ ԿԱ պետգույքի կառավարման վարչության լուծարման բաժնի պետ |
|  | **Մկրտիչ  Ջալալյան** | <<Հաշվարկային կենտրոն>> ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն |
|  | **Հայկ Հարությունյան** | <<Բարձրավոլտ էլեկտրացանցեր>> ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն |
|  | **Սուրեն Կարայան** | <<Հրազդանի էներգետիկ կազմակերպություն>> ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն |
|  | **Ռոման Զոհրաբյանց** | <<Միջազգային էներգետիկ կորպորացիա>> ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն |
|  | **Մովսես Վարդանյան** | <<Հայաստանի ատոմային էլեկտրակայան>> ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն |
|  | **Սասուն Խաչատրյան** | <<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն |



**Կարեն Հարությունյան**

<<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն



**Արա Հովսեփյան**

<<Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ>> ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն



**Ստեփան Պետրոսյան**

ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, ֆիզ-մաթ. գիտությունների դոկտոր



**Երանուհի Ազոյան**

<<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ գլխավոր հաշվապահի տեղակալ



**Մնացական Մնացականյան**

<<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն



# ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Արտաշես Աշոտի Կիրակոսյանս ծնվել եմ 1977 թվականի հոկտեմբերի 12-ին Լենինական քաղաքում, ծառայողի ընտանիքում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացի եմ:

1984-1994թթ. սովորել և ավարտել եմ Լենինականի Կիրովի անվան միջնակարգ դպրոցը:

1994-1999թթ. սովորել և ավարտել եմ Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, ստանալով իրավաբանի որակավորում:

1999-2001թթ. ծառայել եմ ՀՀ զինված ուժերում՝ ՀՀ ազգային անվտանգության նախարարության հատուկ մարտական ստորաբաժանման շարքերում:

2001-2002թթ. աշխատել եմ «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Կումայրի» մասնաճյուղ-ում որպես իրավաբան:

2003 թվականի նոյեմբերի 11-ից մինչև 2008 թվականի նոյեմբերի 17-ը աշխատել եմ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Շիրակի մարզի քննչական բաժնում որպես քննիչ:

2008 թվականի նոյեմբերի 17-ից մինչև 2009 թվականի մարտի 17-ը՝ ՀՀ ոստիկանության պետի աշխատակազմում որպես ՀՀ ոստիկանության պետի տեղակալի օգնական:

2009 թվականի մարտի 17-ից մինչև դեկտեմբերի 26-ը՝ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնի քննչական բաժնում որպես քննիչ:

2010 թվականի հունվարի 11-ից մինչև 2011 թվականի հունիսի 15-ը աշխատել եմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում որպես փորձագետ խորհրդատու, ապա նախարարի օգնական, նախարարի խորհրդական:

2011 թվականի հունիսի 15-ից մինչև 2013 թվականի հունվարի 24-ը աշխատել եմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում որպես աշխատակազմի ղեկավարի տեղակալի պաշտոնակատար:

2013 թվականի հունվարի 24-ից մինչև 2018 թվականի մայիսի 24–ը զբաղեցրել եմ ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնը:

2018 թվականի մայիսի 25-ից աշխատում եմ որպես ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար:

Ամուսնացած եմ, ունեմ երկու երեխա:

Արտաշես Կիրակոսյան

29.05.2018թ.



# Ի Ն Ք Ն Ա Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ո Ւ Թ Ո Ւ Ն

Ես, Ռուբիկ Խիկարի Դավթյանս ծնվել եմ 1955 թվականի հուլիսի 10-ին Սյունիքի մարզ, գ. Լեռնաձորում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացի եմ:

1972-1977թթ. սովորել եմ Երևանի Պետական համալսարանում, այնուհետև Երևանի ժող. ինստիտուտում, ստացել եմ ֆինանսներ և վարկ մասնագիտության տնտեսագետի որակավորում

10.1977թ.-ից աշխատել եմ ՀՍՍՀ Ֆինանսների նախարարության գյուղ.ֆին. վարչությունում, որպես տնտեսագետ

07.1979թ.-ից աշխատել եմ ՀՍՍՀ Ֆինանսների նախարարության գյուղ.ֆին. վարչությունում, որպես ավագ վերստուգիչ

02.1982թ-ից աշխատել եմ ՀՍՍՀ Ֆինանսների նախարարության գյուղ.ֆին. վարչությունում, որպես բաժնի պետ

08.0984թ-ից աշխատել եմ ՀՍՍՀ Ֆինանսների նախարարության գյուղ.ֆին. վարչությունում, որպես վարչության պետի տեղակալ

04.1986թ-ից աշխատել եմ Ագրոարդ Համալիրի ֆինանսների որպես վարչության պետի տեղակալ

05.1990թ-ից աշխատել եմ Պետական հարկային տեսչությունում որպես բաժնի պետ

10.1991թ-ից աշխատել եմ ՀՀ Հարկային տեսչության ինֆորմացիոն բաժնի վարիչ

05.1992թ-ից աշխատել եմ արտադրության ծառայությունների ոլորտի հարկման և տեսչության վարչությունում որպես բաժնի պետ

04.1993թ-ից աշխատել եմ Հարկային վարչությունում որպես բաժնի պետ

07.1994թ-ից աշխատել եմ ՀՀ ՀՊՏ Սյունիքի ՏՀՊՏ, ք.Գորիս, որպես տեսչության պետ

09.1995թ-ից աշխատել եմ ՀՀ ՀՊՏ Սյունիքի ՏՀՊՏ, ք. Կապան, որպես Սյունիքի ՏՀՏ պետ, Կապանի շրջ., որպես ՀՏ պետ

10.1997թ-ից աշխատել եմ ՀՀ ՀՏ Կապանի ՏՀՏ, ք.Կապան, որպես տեսչության պետ

08.1999թ-ից ՀՀ ՊԵՆ համակարգում, ք.Կապան, անցել եմ այլ աշխատանքի

09.1999թ-ից աշխատել եմ ՀՀ ՊԵՆ ՏՀՏ –ների կազմավորման տեսչության վարչությունում, ք. Երևան, որպես գլխավոր ՊՀՏ

11.1999թ-ից աշխատել եմ ՀՀ ֆինանսների նախարության տնտեսական ծրագրերի գլխավոր վարչությունում որպես պետ

06.2000թ-ից աշխատել եմ ՀՀ ֆինանսների էկոնոմիկայի նախարարության միկրոտնտեսական ծրագրերի գլխավոր վարչությունում որպես պետ:

11.2002թ-ից աշխատել եմ ՀՀ ֆինանսների էկոնոմիկայի նախարարության ճյուղավորման տնտեսական ծրագրերի վարչության պետ

06.2005թ-ից աշխատել եմ ՀՀ ֆինանսների էկոնոմիկայի նախարարության հանրային ծառայությունների ոլորտների ծրագրերի վարչության պետ

01.2011թ-ից աշխատել եմ ՀՀ ֆինանսների նախարարության տնտեսական արտադրության ոլորտի բյուջետային ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության պետ

06.2014թ-ից առ այսօր աշխատում եմ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության պետի խորհրդատու:

Ամուսնացած եմ, ունեմ երեք զավակ:



# Արամ Հարությունյան

Անուն, հայրանուն, ազգանուն – Արամ Հարությունյան
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Նալբանդյան 102, բն. 6
Հեռ. (094) 40 37 66
Էլ. Հասցե՝ aram102@yahoo.com

Ծննդյան տարեթիվ 06/12/1970

## Կրթություն

| | |
|---|---|
| 1987-1993թթ. | Հայկական գյուղատնտեսական ինստիտուտ, տնտեսագետ-կազմակերպիչի որակավորում |

## Աշխատանքային գործունեություն

| | |
|---|---|
| 1993-1998թթ. | ՀՀ կառավարությանն առընթեր պետական ունեցվածքի հաշվառման և ապապետականացման վարչություն, որպես տնտեսագետ, բաժնի պետի տեղակալ |
| 1998-2002թթ. | ՀՀ սեփականաշնորհման նախարարություն, որպես բաժնի պետի տեղակալ, բաժնի պետ |
| 2002-2004թթ. | «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, որպես բաժնի պետ |
| 2004-2006թթ. | «Ընկերությունների աջակցման և պետական գույքի գնահատման գործակալություն» ՊՈԱԿ, որպես վարչության պետ |
| 2006-2008թթ. | ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն, որպես գլխավոր աուդիտոր |
| 2008թ. առ այսօր | ՀՀ ԿԱ պետ գույքի կառավարման վարչության լուծարման բաժնի պետ |

**Ընտանեկան դրություն**
ամուսնացած, ունի երեք երեխա



# Ի Ն Ք Ն Ա Կ Ե Ն Ս Ա Գ Ր ՈՒ Թ ՈՒ Ն

Ես, Մկրտիչ Կարապետի Ջալալյանս, ծնվել եմ 1955 թվականի սեպտեմբերի 29-ին Երևանում: 1972թ-ին ավարտել եմ Ֆ. Ձերժինսկու անվան թիվ 20 միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել եմ Երևանի Կ. Մարքսի անվան Պոլիտեխնիկական ինստիտուտի էներգետիկական ֆակուլտետ:

1977թ-ին ավարտել եմ ինստիտուտը, ստանալով ավտոմատացման գծով ինժեներ-ջերմաէներգետիկի որակավորում և ընդունվել եմ աշխատանքի «Հայէներգակարգաբերում» ձեռնարկություն, որպես ինժեներ:

1979թ-ի դեկտեմբերին ընդունվել եմ Մոսկվայի էներգետիկական ինստիտուտի ասպիրանտուրան՝ տեխնոլոգիական պրոցեսների ավտոմատ կառավարման ամբիոն:

1982թ-ին ավարտելով ասպիրանտուրան, կրկին աշխատանքի եմ ընդունվել «Հայէներգակարգաբերում» ձեռնարկություն, որտեղ աշխատել եմ մինչև 1990թ., զբաղեցնելով ավագ ինժեների, էլեկտրական մեքենաների փորձարկման տեղամասի պետի, ավտոմատացված համակարգերի կառավարման արտադրամասի պետի տեղակալի պաշտոնները:

1985թ-ին պաշտպանել եմ գիտական թեզ՝ «Էներգահամակարգի հզորության և հաճախականության կարգավորման ռեժիմում աշխատող 200ՄՎտ հզորությամբ էներգաբլոկի ավտոմատ կարգավորման համակարգի մշակում և հետազոտում» թեմայով և ստացել տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1985-1990թ.թ.-ը համատեղության կարգով դասավանդել եմ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում:

1991-1995թ.թ.-ը աշխատել եմ ՀՀ Լուսավորության նախարարությունում մասնագիտական-տեխնիկական կրթության վարչությունում, վարչության պետի պաշտոնում:

1995-2002թ.թ.-ը աշխատել եմ ՀՀ Էներգետիկայի նախարարության Էներգապետհսկողության գլխավոր վարչությունում, որպես արտադրատեխնիկական բաժնի պետ, այնուհետև էլեկտրակայանների և շահագործման տեսչական վարչության պետի պաշտոնում:

2002-2010թ.թ. աշխատել եմ ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովում՝ Լիցենզավորված գործունեության մոնիտորինգի և ներդրումային ծրագրերի վարչության պետի պաշտոնում:

2011թ-ի փետրվարից մինչև 2013թ.-ի սեպտեմբեր աշխատել եմ «Էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ–ում արտադրատեխնիկական գծով տնօրենի տեղակալի պաշտոնում:

2013թ-ի սեպտեմբերից մինչ այսօր աշխատում եմ «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ում որպես տնօրենի տեղակալ:

Ժամանակավորապես կատարում եմ գլխավոր տնօրենի պարտականությունները:

Ամուսնացած եմ, ունեմ երկու երեխա:

Ինքնակենսագրություն



Հայկ Համայակի Հարությունյան, ծնվել եմ 1978թ. ապրիլի 9-ին Երևանում:

1984-1994թթ. ուսանել եմ միջնակարգ դպրոցում:

1994-1998թթ. ուսանել եմ Հայաստանի Պետական Ճարտարագիտական Համալսարանի «Էլեկտրոնիկայի, կենսաբժշկական ճարտարագիտության և կառավարման համակարգեր» դեպարտամենտում «Էլեկտրոնիկա» մասնագիտությամբ՝ ստանալով ճարտարագետ բակալավրի որակավորում:

1998-2000թթ. ուսանել եմ նույն համալսարանի Ասպիրանտական դպրոցի մագիստրատուրայում «Էլեկտրոնիկա և միկրոէլեկտրոնիկա» մասնագիտությամբ՝ ստանալով ճարտարագետ մագիստրոսի որոկավորում:

2000-2002թթ. ուսանել եմ նույն համալսարանի ասպիրանտուրայում «Էլեկտրոնիկա» մասնագիտությամբ՝ ստանալով ճարտարագետ հետազոտողի աստիճան:

2003թ. պաշտպանել եմ ատենախոսություն՝ ստանալով տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական կոչում:

2009-2011թթ. հեռակա ուսանել եմ Հայաստանի Պետական Ճարտարագիտական Համալսարանի մագիստրատուրայում «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (էներգետիկայի ճյուղ)» մասնագիտությամբ՝ ստանալով ճարտարագետ մագիստրոսի որոկավորում:

Ուսանելու հետ համատեղ, 1998թ.-ի օգոստոսի 10-ից  մինչև 2002թ.-ի փետրվարի 27-ը աշխատել եմ «Հայթունել» ԲԲԸ-ում որպես ճարտարագետ-մեխանիկ:

2002թ. մարտի 1-ից մինչև 2002թ. դեկտեմբերի 2-ն զբազեցրել եմ ՀՀ էներգետիկայի նախարարության զարգացման վարչության գլխավոր մասնագետի պաշտոնը:

2002թ. դեկտեմբերի 2-ից մինչև 2006թ. մարտի 24-ն զբաղեցրել եմ նույն նախարարության աշխատակազմի վարկային, դրամաշնորհային ծրագրերի իրականացման և կապիտալ ծախսերի համակարգման բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնը:

2006թ. մարտի 24-ից 2006թ. մայիսի 26-ը զբաղեցրել եմ նույն նախարարության աշխատակազմի ներդրումային ծրագրերի և կապիտալ ծախսերի համակարգման վարչության կապիտալ ծախսերի համակարգման բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնը:

2006թ. մայիսի 26-ից մինչև 2009թ. փետրվարի 13-ը զբաղեցրել եմ նույն նախարարության աշխատակազմի ներդրումային ծրագրերի և կապիտալ ծախսերի համակարգման վարչության պետի պաշտոնը:

2009թ. փետրվարի 13-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 16-ը զբաղեցրել եմ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ներդրումային ծրագրերի և կապիտալ ծախսերի համակարգման վարչության պետի պաշտոնը:

2015թ. դեկտեմբերի 16-ից մինչև 2017թ. փետրվարի 6-ը զբաղեցրել եմ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետի պաշտոնը:

2017թ. փետրվարի 6-ից մինչև 2018թ. հունիսի 11-ը զբաղեցրել եմ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալի պաշտոնը:

2018թ. օգոստոսի 2-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 5-ը ժամկետային պայմանագրով աշխատել եմ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի գլխավոր խորհրդական ներդրումների գծով:

2018թ. դեկտեմբերի 6-ից նշանակվել եմ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն:

Ամուսնացած եմ, ունեմ երեք զավակ:



**Սուրեն Կարայան**

**Ծննդյան տարեթիվ, ամսաթիվ, ծննդավայր**
1973 թ., 26 ապրիլի, Իջևանի շրջ., գ. Աչաջուր

**Կրթություն**
1990-1995թթ.- Երևանի պետական համալսարան
1995-1998թթ.- Երևանի պետական համալսարան՝ ասպիրանտ

**Աշխատանքային գործունեություն**
1997-1998թթ.- ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն՝ հարկային քաղաքականության վարչության առաջատար մասնագետ (պայմանագրային հիմունքներով)
1998-1999թթ.- ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն՝ հարկային քաղաքականության վարչության բաժնի պետի պաշտոնակատար, բաժնի պետ
1999-2000թթ.-ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն՝ հարկային քաղաքականության վարչության պետի պաշտոնակատար, վարչության պետ
2000-2001թթ.-ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն՝ պետական եկամուտների քաղաքականության գլխավոր վարչության պետի տեղակալ, հարկային քաղաքականության վարչության պետ
2001-2002թթ.- ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն՝ պետական եկամուտների քաղաքականության գլխավոր վարչության պետ
2002-2006թթ.-ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն՝ պետական եկամուտների քաղաքականության վարչության պետ
2006-2008թթ.-ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն՝ նախարարի տեղակալ
2008-2015թթ.- ՀՀ ֆինանսների նախարարություն՝ նախարարի տեղակալ
2015-2016թթ.- ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարի առաջին տեղակալ
2016-2018 մայիս ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար
2019 փետրվարից մինչ օրս «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ գլխավոր տնօրեն

**Այլ տվյալներ**
Զինապարտ է, ունի ՝ լեյտենանտի զինվորական կոչում:

Պարգևատրվել է «Անանիա Շիրակացի», «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալներով, արժանացել է ՀՀ պաշտպանության նախարարի պատվոգրով:

**Անձնական տվյալներ**
Ամուսնացած է, ունի 2 երեխա:



## Ռոման Վլադիմիրի Զոհրաբյանց

**Ծնվել է** 03.07.1975թ.:

**Կրթությունը `** բարձրագույն:

**1995-1999թթ.** Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական Համալսարանի իրավաբանության ֆակուլտետը (ստացել է իրավաբանի որակավորում) :

**Աշխատանքնային փորձը**

**01.02.1998- 31.10.1999թթ.** Ռուսաստանի <<Միասնական էներգետիկ համակարգի համակարգային օպերատոր>> ԲԲԸ, իրավախորհրդատու,

**01.11.1999- 30.03.2001թթ.** Ռուսաստանի <<Միասնական էներգետիկ համակարգի համակարգային օպերատոր>> ԲԲԸ, պայմանագրային բաժնի պետի տեղակալ,

**02.04.2001թ.** <<Էլեկտրաէներգիայի դաշնային մեծածախ շուկայի պայմանագրերի և հաշվարկների կենտրոն>> ՓԲԸ, իրավաբանական վարչության պետ,

**16.11.2004- 31.05.2005թթ.** <<Էլեկտրաէներգիայի դաշնային մեծածախ շուկայի պայմանագրերի և հաշվարկների կենտրոն>> ՓԲԸ, կորպորատիվ և իրավական հարցերով գլխ. տնօրենի տեղակալ

**01.2005- 03.2007թթ.** <<Ֆինանսական հաշվարկների կենտրոն>> ՓԲԸ, գլխ. տնօրենի իրավական հարցերով խորհրդական,

**01.06.2005- 31.03.2008թթ.** << Էլեկտրաէներգիայի մեծածախ շուկայի առաջին վերարտադրող ընկերություն>> ՓԲԸ, գլխ. տնօրենի տեղակալ, խորհրդի անդամ,

**01.04.2008- 31.12.2008թթ.** << Սիբիրյան ածխային էներգետիկ ընկերություն>> ԲԲԸ, Ռազմավարական պլանավորման կենտրոնի ղեկավար,

**23.11.2009թ.-ից** <<Ֆորտում>> ԲԲԸ, Բիզնեսի զարգացման և ռազմավարության վարչության ռազմավարության գծով տնօրեն,

**01.02.2010 3t.12.2010թթ.** <<Ֆորտում>> ԲԲԸ, ռազմավարության գծով փոխնախագահ,

**01.08.2011թ.-ից մինչ օրս** <<Ինտերնեշնլ Ռուս Հիդրո >>ԲԸ-ի Մոսկվայի մասնաճյուղ, տնօրեն

**31.12.2016թ.-ից մինչ օրս** <<Բաշկորկոստան արդյունավետություն Ռուս Հիդրո>> ԲԸ-ի միանձնյա գործադիր օրգանի գլխավոր տնօրեն

**19.06.2018թ.-ից մինչ օրս** <<Միջազգային Էներգետիկ Կորպորացիա>> ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն



# Մովսես Գառնիկի Վարդանյան

Ծնվել է 20.08.1963թ. Հայկ. ՍՍՀ, Թալինի շրջ.,գ. Աշնակ
ՀՀ քաղաքացի, Հասցեն- ՀՀ ք. Երևան, Վահագն Դավթյան,
2-րդ. նրբ. տուն 11
*Աշխատանքային գործունեությունը սկզբից /ներառյալ բարձրագույն եւ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսումնառությունը/*

| Ամիս, տարի<br>Ընդունվելու | Ազատվելու | Աշխատավայր և պաշտոն | Աշխատավայրի հասցեն |
|---|---|---|---|
| 09.1980թ. | 07.1985թ. | Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտ , ուսանող<br><<ՀԱԷԿ>> ՓԲԸ | ք.Երևան<br>ք. Մեծամոր |
| 09.1985թ. | 06.1986թ. | Տուրբինային արտադրամաս (ՏԱ), տուրբինային օժանդակ սարքավորումների շրջիկ- մեքենավար | |
| 06.1986թ. | 04.1987թ. | ՏԱ, տուրբինային հիմնական սարքավորում-ների շրջիկ- մեքենավար | |
| 04.1987թ. | 02.1988թ. | ՏԱ, կառավարման բլոկային վահանակի մեքենավար, | |
| 02.1988թ. | 07.1988թ. | ՏԱ, ավագ մեքենավար | |
| 07.1988թ. | 10.1993թ. | ՏԱ, հերթափոխի պետ | |
| 10.1993թ. | 11.1995թ. | ՀԱԷԿ-ի հերթափոխի պետի փորձնակ | |
| 11.1995թ. | 06.2002թ. | ՀԱԷԿ-ի հերթափոխի պետ | |
| 06.2002թ. | 10.2002թ. | Գլխավոր ճարտարագետի պաշտոնակատար | |
| 10.2002թ. | 12.2014թ. | Գլխավոր ճարտարագետ | |
| 12.2014թ. | 17.12.2015թ. | Գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար | |
| 17.12.2015թ. | առ այսօր | Գլխավոր տնօրեն | |

Ամուսնացած է, ունի երեք երեխա:

## Սասուն Սաշայի Խաչատրյան



Ծնվել է 1960 թվականին, Գորիս քաղաքում:

1978-1983թ.թ. ընդունվել և ավարտել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտը:

1981 թվականից աշխատանքի է անցել Գորիս քաղաքի տարբեր ձեռնարկություններում, իսկ 1999 թվականից ՀԷՑ ՊՓԲԸ Գորիսի շրջանային էլ. ցանցի տնօրեն:

2000 թվականից նշանակվել է ՀԷՑ ՓԲԸ <<Գորիս Էլ. Ցանց>> մասնաճյուղի տնօրեն, իսկ 2000թ. ապրիլ ամսից <<Որոտանի ՀԷԿ-երի համակարգ>> ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն:

2017 թվականի հունվարից նշանակվել է <<Երևան ՋԷԿ>> ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն:

Արժանացել է տարբեր պատվոգրերի և շնորհակալագրերի:

Ամուսնացած է, ունի երկու զավակ:



## Կարեն Սերգեյի Հարությունյան
**18.08.1968թ.**

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ**՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ

| | |
|---|---|
| 1987-1991թթ. | Հայկական պետական տնտեսագիտական համալսարան /Երևանի ժողտնտեսության ինստիտուտ/, ապրանքագետ, առևտրի կազմակերպիչ |
| 1997-2001թթ. | ՀՀ էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ, տնտեսագետ - էներգետիկ |

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁԸ**

| | |
|---|---|
| 16.10.2015թ. մինչ օրս | “Հայաստանի էլեկտրական ցանցեր” ՓԲԸ գլխավոր տնօրեն |
| 2014թ. օգոստոսից մինչ 16.10.2015թ. | “Բարձրավոլտ էլեկտրացանցեր” ՓԲԸ տնօրենի տեղակալ, ֆինանսական գծով տնօրեն |
| 2014թ. հունիսից մինչև 2015թ. մայիս | Grant Thornton Տաջիկստան, ֆինանսական փորձագետ |
| 2012թ. օգոստոսից մինչև 2014թ. նոյեմբեր | MVV decon, AEG Service, SAUR S.A.S. ՓԲԸ, "Շիրակ-ջրմուղկոյուղի" ՓԲԸ ֆինանսական տնօրեն և "Լոռի-ջրմուղկոյուղի" ՓԲԸ, "Շիրակ-ջրմուղկոյուղի" ՓԲԸ և "Նոր Ակունք" ՓԲԸ ֆինանսական կոորդինատոր |
| 2002թ. մինչև 2012թ. մայիս | “Հայաստանի էլեկտրական ցանցեր” ՓԲԸ, ֆինանսական տնօրենի տեղակալ, գլխավոր գանձապետ, գլխավոր հաշվապահ |
| 2002թ. մարտից մինչև նոյեմբեր | “Հայջրմուղկոյուղի” ՓԲԸ, ֆինանսական տնօրեն |
| 1996- 2002 թթ. | “Երևանի էլեկտրացանց” ՓԲԸ, ֆինանսական տնօրեն, գլխավոր հաշվապահ |
| 1996 – 1997 թթ. | “Նուբարաշենի էլեկտրացանց” ՓԲԸ, գլխավոր հաշվապահ |
| 1991-1996թթ. | Հայաստանի ապրանքահումքային բորսա, բրոքերային կազմակերպության ղեկավար |

**ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա, Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի անդամ

**ԼԵԶՈՒՆԵՐ** ՝ Հայերեն, ռուսերեն, անգլերեն

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ**՝ Ամուսնացած է, ունի մեկ որդի և մեկ դուստր



**Ի Ն Ք Ն Ա Կ Ե Ն Ս Ա Գ Ր ՈՒ Թ ՈՒ Ն**

Ես, Արա Գագիկի Հովսեփյանս, ծնվել եմ 1974 թվականի փետրվարի 11-ին, քաղաք Երևանում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացի եմ:

1995թ.-ին ավարտել եմ Վ. Բրյուսովի անվան Երևանի լեզվագիտական համալսարանի անգլերեն լեզվի և պատմության ֆակուլտետը, ունեմ բակալավրի դիպլոմ.

1995-2000թթ. աշխատել եմ ՀՀ Արտաքին գործերի նախարարությունում

2000-2006թթ. աշխատել եմ Միացյալ Թագավորության դեսպանատանն ներքո՝ Միջազգային Զարգացման նախարարության /DFID/ Հայաստանյան Ներկայացուցչության առաջին տեղական ղեկավար:

2006-2011թթ. հանդիսացել եմ ԱՄՆ Հազարամյակի Մարտահրավերներ (ՀՄՀ) ծրագրի գլխավոր գործադիր տնօրեն

2012-2013թթ. ղեկավարել եմ Ասիական Զարգացման Բանկի և ՀՀ Կառավարության կողմից ֆինանսավորվող «Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի կառուցման» ներդրումային ծրագիրը

2013թ.-ից մինչ օրս հանդիսանում եմ ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ ՓԲԸ-ի Գլխավոր Տնօրեն

Ունեմ Հայաստանում Ամերիկյան Համալսարանի քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների մագիստրոսի դիպլոմ (1997թ.), ինչպես նաև Օքսֆորդի Համալսարանի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության հետբուհական ասպիրանտական դիպլոմ (Oxford University, Exeter College, 1999):

Ամուսնացած եմ:



## Ստեփան Գրիգորի Պետրոսյան

Ծնվել է 17.07.1951թ. Թալինի շրջանի Դավթաշեն գյուղում:

1968-1973թթ. - սովորել և գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը:

1973-1976թթ. - ուսանել է Սանկտ Պետերբուրգի ԽՍՀՄ ԳԱԱ Իոֆֆեյի անվան Ֆիզիկա-տեխնիկական ինստիտուտի ասպիրանտուրայում՝ կիսահաղորդիչների ֆիզիկա մասնագիտությամբ:

1977-1984թթ. - Երևանի պետական համալսարանի ռադիոֆիզիկայի ֆակուլտետի կիսահաղորդիչների և դիէլեկտրիկների ֆիզիկայի ամբիոնի կրտսեր, ավագ գիտաշխատող:

1984-1991թթ. - Երևանի պետական համալսարան, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի կիսահաղորդիչների և դիէլեկտրիկների ֆիզիկայի ամբիոնի դոցենտ:

1991-2004թթ. - Երևանի պետական համալսարանի ռադիոֆիզիկայի ֆակուլտետի կիսահաղորդիչների և դիէլեկտրիկների ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր:

2003-2008թթ. - «Կիսահաղորդչային նանոէլեկտրոնիկա» հանրապետական նպատակային ծրագրի տեսական խմբի ղեկավար:

2004-2008թթ. - Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի ֆիզիկա-տեխնիկական ֆակուլտետի դեկան, պինդ մարմնային էլեկտրոնիկայի նյութերի և բաղադրիչների ամբիոնի պրոֆեսոր:

2008թ. նոյեմբերից- 2011թ. օգոստոս-ՀՀ սփյուռքի նախարություն, նախարարի տեղակալ:

2011թ. սեպտեմբերից- ՀՀ սփյուռքի նախարարի խորհրդական:

Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր է (1990թ., Սանկտ Պետերբուրգի տեխնիկական համալսարան), պրոֆեսոր (2005թ.):

2013թ.-ին պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով:

Երեք ուսումնամեթոդական ձեռնարկների, երկու մենագրության և շուրջ 120 գիտական հոդվածների հեղինակ է, որոնց գերակշիռ մասը հրատարակված է

արտասահմանյան հեղինակավոր ամսագրերում: Մասնակցել և զեկույցներով հանդես է եկել բազմաթիվ միջազգային գիտական համաժողովներում:

Ազատ տիրապետում է անգլերենին և ռուսերենին:

Ամուսնացած է, ունի երեք երեխա:

*Միջազգային կապեր և այցելություններ*

1984-1985թթ. - ԱՄՆ, Լուիզիանայի պետական համալսարան, Ռիվերսայդի կալիֆորնիական համալսարան, գիտական երկարատև գործուղում:

1989-1990թթ. - Ռուսաստան, Սանկտ Պետերբուրգի ԽՍՀՄ ԳԱԱ Իոֆֆեյի անվան ֆիզիկա-տեխնիկական ինստիտուտ, դոկտորանտ:

1988, 1992, 1994, 1997թթ. - Իտալիա, Տրիեստի տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոն, մեկից մինչև երեք ամսյա մասնակցություն գիտական դպրոցի աշխատանքներին որպես առաջատար հետազոտող:

1997-2004թթ. - Իտալիա, Տրիեստի տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոն որպես այդ Կենտրոնի ընտրված անդամ, մասնակցություն գիտական համաժողովներին, դասախոսություններ, գիտական աշխատանք:

2001թ. - Իտալիա, Պավիայի պետական համալսարան, վեցամսյա գիտական աշխատանք:

2003թ. - Ֆրանսիա, Ստրասբուրգի PHASE-CNRS լաբորատորիա, մեկամսյա գիտական համատեղ աշխատանք:

2002թ., 2005թ. - Գերմանիա, Բոխումի համալսարան, մեկամսյա և երեքամսյա գիտական աշխատանք և դասախոսություններ կիսահաղորդչային նանո-էլեկտրոնիկայից:

2007թ. - Կանադա, Տորոնտոյի համալսարան, մեկամսյա գիտական աշխատանք:

*Դրամաշնորհներ*

INTAS (EU, երկու), TRIL (Italy), ISTC (USA), ANSEF (USA), CIDA(Canada).

*Անդամություն գիտական խորհուրդներին և ընկերություններին*

ԵՊՀ խորհրդի անդամ (1999-2003թթ.), ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի խորհրդի անդամ (1991-2005թթ.), ՌՀ(Ս)Հ Գիտական խորհրդի անդամ (2005-2009թթ.), ԵՊՀ 049 - Մասնագիտացված խորհրդի անդամ (1998-2009թթ.), ՀՀ ԳԱԱ ՝ թղթակից անդամ (2010թ.):

Հեռ.՝ (+374 91) 43-93-48, էլ. փոստ՝ spetrosyan@rau.am

## Ի Ն Ք Ն Ա Կ Ե Ն Ս Ա Գ Ր ՈՒ Թ ՈՒ Ն



Ես, Երանուհի Վիգենի Ազոյանս, ծնվել եմ 1970 թվականի ապրիլի 4-ին քաղաք Երևանում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացի եմ:

07.09.1987-29.08.1988թթ. աշխատել եմ §Երքաղգործկոմ» ՃՀՇՎ-ում, որպես տեխնիկ

01.09.1988-04.08.1993թթ. սովորել եմ Հայաստանի Պետական Ճարտարագիտական համալսարանում, էներգետիկայի ֆակուլտետում, ստացել եմ ճարտարագետ - ջերմաէներգետիկի որակավորում.

02.08.1993-30.05.1995թթ. աշխատել եմ «Նելսոն» ՍՊԸ-ում, ք. Երևան, որպես գլխավոր հաշվապահ

01.06.1995-07.09.1995թթ. աշխատել եմ Միքայելյանի անվան վիրաբուժական կենտրոնում, ք. Երևան, որպես գլխավոր հաշվապահի տեղակալ

25.11.1995-26.10.1998թթ. աշխատել եմ «Երևանի էլեկտրացանց» ՊՁ «Կենտրոն» մ/ճ, որպես առաջին կարգի հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ

27.1.1998-01.04.2002թթ. աշխատել եմ «Կենտրոնական Էլեկտրացանց» ՊՓԲԸ, ք. Աբովյան, որպես գլխավոր հաշվապահի տեղակալ

01.04.2002-03.04.2006թթ. աշխատել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում, որպես գլխավոր հաշվապահի տեղակալ

03.04.2006թ.-ից առ այսօր աշխատում եմ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի, Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների դեպարտամենտում, որպես գլխավոր հաշվապահի տեղակալ:

Ամուսնացած չեմ:

# Մնացական Անդրիասի Մնացականյան



ծնված 1954թ. հուլիսի 25-ին, կրթությունը՝ բարձրագույն

Մնացական Մնացականյանը 1971թ-ին ընդունվել և 1976թ. ավարտել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի էներգետիկական ֆակուլտետը <<Արդյունաբերական ձեռնարկությունների, քաղաքների և գյուղատնտեսության էլեկտրամատակարարում>> մասնագիտությամբ:

Մ.Մնացականյանի աշխատանքային գործունեությունը ՀՀ էներգահամակարգում՝

| | | |
|---|---|---|
| 1976 | - 1982թ.թ. | <<Հայգլխէներգո>> ԱԳՎ <<Արևելյան էլեկտրացանցեր>> մ-ճ՝ ճարտարագետ-կարգավար, ավագ կարգավար, ԿԿԾ պետ: |
| 1982 | - 1996 թ.թ. | <<Հայգլխէներգո>>՝ ԿԿԾ կարգավար, ավագ կարգավար, օպերատիվ գծով ծառայության պետի տեղակալ, <<Հայէներգոարդ>> ՊՁ գլխ.ճարտ-տի տեղակալ - ԿԿԾ պետ, Կարգավարական վարչության պետ- գլխավոր կարգավար, գլխավոր տնօրենի տեղակալ օպերատիվ մասով: |
| 1996 | - 1997 թ.թ. | ՀՀ Էներգետիկայի և վառելիքի նախարարություն՝ էներգակիրների իրացման և շրջանային ցանցերի աշխատանքների համակարգման վարչության պետի տեղակալ, պետի պաշտոնակատար: |
| 1997 | - 2002 թ.թ. | <<Հայէներգո>> ՊՁ <<ԲԷՑ>>ԴՁ <<Կենտրոնական էլ.ցանցեր>> մ-ղ՝ գլխավոր ճարտարագետ: |
| 2002 | - 2007 թ.թ. | <<Հայաստանի էլեկտրացանցեր>> ՓԲԸ՝տեխնիկական գծով տնօրեն, գլխավոր տնօրենի տեղակալ-տեխնիկական հարցերով տնօրեն: |
| 2007 | - | <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն: |

Մ.Մնացականյանը իր աշխատանքային գործունեության ընթացքում՝ սկսած 1976 թվականից Էներգետիկ համակարգի տարբեր բնագավառներում իրեն դրսևորել է

որպես բանիմաց, իր գործը բազմակողմանի տիրապետող, բարձրակարգ մասնագետ, պարտաճանաչ անձնավորություն: Աշխատելով ՀՀ էներգետիկայի համակարգում

ստեղծել է առողջ կոլեկտիվ, պատրաստել է որակյալ մասնագետներ:

Մ.Մնացականյանը Էներգետիկայի բնագավառում ներդրած նշանակալի ավանդի համար **պարգևատրվել է**՝

- ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հրամանագրով՝ **<<Աշխատանքային արիություն>> շքանշանով**՝ 1988 թվականի երկրաշարժի ժամանակ էնէրգետիկ օբյեկտների վերականգնողական աշխատանքներին ակտիվ մասնակցելու համար:
- **ՀՀ Նախագահի կողմից՝ Շնորհակալագրով՝** Հայաստանի էներգետիկ համակարգի հիմնադրման 100-ամյակի կապակցությամբ:
- **ԱՊՀ Վաստակավոր էներգետիկ է:**
- Ռուսաստանի դաշնության աշխարհաքաղաքական խնդիրների ակադեմիայի կողմից՝ **ոսկե մեդալով՝** <<ՀՀ անկախության 20 ամյակի կապակցությամբ>> անվանակարգում ՀՀ էկոնոմիկայի զարգացմանն ուղղված ներդրման համար:
- Ղարաբաղյան պատերազմի վետերանների միության կողմից՝ ՀՀ անկախության 20 ամյակի կապակցությամբ՝ <<**Շնորհակալագրով**>>՝ Ղարաբաղյան պատերազմի վետերաններին մշտապես աջակցելու համար:

## Խորհրդի գործունեությունը

2018թ. ընթացքում Խորհուրդը գումարել է 5 նիստ, որից 5-ը հեռակա քվեարկությամբ, Խորհրդի նիստերի օրակարգը և դրան ուղեկցող փաստաթղթերը Խորհրդի անդամներին է ուղարկվում նիստի օրվանից առնվազն 10 օր առաջ:

Խորհրդի անդամների մասնակցությունը Խորհրդի նիստերին ունի հետևյալ պատկերը՝ բոլոր նիստերին մասնակցել են Խորհրդի 13 անդամներ:

## Գործադիր մարմին

Ընկերության գործադիր մարմինը բաղկացած է մեկ գլխավոր տնօրենից՝ Մնացական Անդրիասի Մնացականյան, որի կենսագրությունը տրված է սույն հաշվետվության 25-րդ էջում:

2018թ. Ընկերության ներքին աուդիտ իրականացնող անձ և կորպորատիվ քարտուղար չի նշանակվել:

## ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003թ. մայիսի 2-ի <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> և <<Էներգակարգաբերում>> փակ բաժնետիրական ընկերություններ ստեղծելու մասին>> N779-Ա որոշման 1 կետի ա) ենթակետի պահանջներին համապատասխան ստեղծվել է <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> փակ բաժնետիրական ընկերություն:

Նույն որոշման 6-րդ կետի համաձայն <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահվել են հետևյալ պաշտոնատար անձանցից յուրաքանչյուրին քվեարկող բաժնետոմսերի ընդհանուր թվի 1/5 չափով.

Հայաստանի Հանրապետության վարչապետ

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար

ՀՀ էներգետիկայի նախարար

ՀՀ արդարադատության նախարար

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետ

<<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> ՓԲԸ-ի հիմնադիր ժողովը տեղի է ունեցել 2003թ. հոկտեմբերի 30-ին, որի որոշման 1-կետով հաստատվել է <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> ՓԲԸ-ի ստեղծումը:

ՀՀ կառավարության 2003թ. նոյեմբերի 6-ի <<ՀՀ էներգետիկայի ոլորտի պետական ընկերությունների 2003 – 2007 թվականների ֆինանսական առողջացման ծրագրի ու 2003 – 2007 թվականների ֆինանսական հոսքերի կանխատեսումների և մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>> N1694-Ն որոշման 2-րդ կետի պահանջներին համապատասխան Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող Ընկերության բաժնետոմսերի լիազորությունները վերապահվել է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարին:

Ընկերության կանոնադրությունը Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2003թ. նոյեմբերի 5-ին: Ընկերության 2018թ. մայիսի 2-ի Ընդհանուր ժողովի որոշմամբ կատարվել են փոփոխություններ կանոնադրությունում, որոնք սահմանված կարգով գրանցվել են Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում:

ՀՀ բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի 2003թ. դեկտեմբերի <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> ՓԲԸ-ին էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման լիցենզիա տրամադրելու մասին>> N87-Ա որոշման 1 կետով Ընկերությանը տրամադրվել է էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման լիցենզիա, որի պայմանները հաստատվել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017թ. մայիսի 17-ի N163Ա որոշմամբ:

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընկերությունը իր կառուցվածքում ունի մեկ՝ <<Էներգակայա>> մասնաճյուղ:

Ընկերության տնօրինության տակ են գտնվում ներքոհիշյալ վարչական և արտադրական տարածքները.

ՀՀ Կառավարության 2003թ. մայիսի 2-ի <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> և <<Էներգակարգաբերում>> փակ բաժնետիրական ընկերություններ ստեղծելու մասին N779-Ա որոշման հավելված 1-ով փոխանցվել է շենք շինություն (<<Էներգակայա>> մասնաճյուղ), որոնք սեփականության իրավունքով՝ 2005թ. հոկտեմբերի 18-ին, 1092.3 քառ. մետր մակերեսով, գրանցված են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 3-6 մատյանի 000295 համարի տակ, քաղ. Երևան, Արաբկիր համայնք, Մալխասյանց փող. թիվ 2 հասցեում, այդ թվում՝ վարչական շենք, պահեստներ, ավտոտնակներ, ծածկեր, բենզալցակայան:

Նույն կադաստրի պետական կոմիտեում 2006թ.-ից քաղ.Երևան, Մալխասյանց 2 հասցեի 0.265 հա հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը՝ ՀՀ կառավարության 01.10.05թ. N199-Ն որոշման և ՀՀ հողային օրենսգրքի 23 հոդվածի պահանջների համաձայն, փոխանցվել է <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> ՓԲԸ-ին:

2006թ. Ընկերության կողմից անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով զբաղեցրած հողամասի (<<Էներգակայա>> մասնաճյուղ - 0.265 հա) նկատմամբ գրանցվել է սեփականության իրավունք, որը ակտիվների կազմում ներառելու և հաշվապահական ձևակերպումներ տալու վերաբերյալ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2/3 1-5/3-3058, 07.03.06թ. պարզաբանմամբ որպես հետաձգված եկամուտ Ընկերությունը ձևակերպել է 105.979 մլն դրամ: Նշված եկամուտը պետք է ճանաչվի որպես եկամուտ սիստեմատիկ և ռացիոնալ հիմունքով, տվյալ հողամասի վրա կառուցված շենքերի, շինությունների միջին կշռված մնացորդային օգտակար ծառայության ժամկետի ընթացքում և վերագրվի հաշվետու ժամանակաշրջանի եկամուտներին:

ՀՀ կառավարության 2009թ. օգոստոսի 13-ի <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> փակ բաժնետիրական ընկերությանը գույք հանձնելու մասին>> N924-Ա որոշմամբ <<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ Երևան քաղաքի Աբովյան 27 հասցեում գտնվող՝ 3436.95 քառ. մետր մակերեսով ու 2327154 հազ.դրամ գնահատված արժեքով շենքը և դրա սպասարկման ու օգտագործման համար հատկացված 0.13639 հեկտար հողատարածքը ներդրվել է <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում: ՀՀ Կառավարության 2010թ. փետրվարի 18-ի N150-Ա որոշմամբ <<3436.95 քառ. մետր մակերեսով>> բառերը փոխարինվել են <<3536.95 քառ. մետր մակերեսով>> բառերով, իսկ <<2327154>> թիվը՝ <<2343603>>:

2010թ. ապրիլի 12-ին սեփականության իրավունքով՝ 3536.95 քառ. մետր մակերեսով շենքը և 0.13639 հեկտար հողատարածքը՝ գրանցված են ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 010063-21 մատյանի 00210 համարի տակ, քաղ. Երևան, Կենտրոն համայնք, Աբովյան փող. թիվ 27 հասցեում:

ՀՀ կառավարության 2017թ. դեկտեմբերի 7-ի <<ՀՀ կառավարության 25.02.2010թ. N182-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում գույք ներդնելու մասին>> N1557-Ա որոշման համաձայն, ք.Երևան, Ծովակալ Իսակովի 50/21 հասցեում 0.25555 հեկտար մակերեով հողամասը 38700.0 հազ.դրամ շուկայական արժեքով ներ է դրվել <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում, որը համապատասխան գրանցում է ստացել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում, ինչպես նաև համապատասխան գրանցում է ստացել ՀՀ պետական ռեգիստրում:

## II. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2018թ. ընթացքում Ընկերությունը, համապատասխան մակարդակով, իրականացրել է օպերատորի ծառայության մատուցման լիցենզիայով նախատեսված բոլոր գործառույթները՝ ապահովելով ՀՀ էներգահամակարգի անվտանգությունն ու հուսալիությունը: Տարվա ընթացքում Կենտրոնական կարգավարական ծառայության աշխատակիցների մեղքով վթարներ չեն արձանագրվել:

Հանդիսանալով էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակից, <<ԷԷՀՕ>> ՓԲԸ-ն իր փոխհարաբերությունները շուկայի այլ մասնակիցների հետ վարում է համապատասխան <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և էլեկտրաէներգետիկական համակարգի լիցենզավորված այլ անձանց փոխհարաբերությունների կարգը հաստատելու մասին>> ՀՀ ՀԾԿՀ 2008թ. հուլիսի 2-ի N347-Ն որոշման: <<ԷԷՀՕ>> ՓԲԸ-ի գործունեության ոլորտում կարևոր տեղ է հատկացված նաև ՀՀ ՀԾԿՀ <<ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ապահովման կանոններ>> 2004թ. դեկտեմբերի 24-ի N176-Ն որոշմամբ սահմանված դրույթների իրագործմանը:

Ընկերությունը, լիցենզիայի պայմաններին համապատասխան, տարվա ընթացքում մշակել և արտադրող, բաշխող և տեղափոխող ընկերություններին է տրամադրել համապատասխան հրահանգներ:

Տեխնիկական բարձր մակարդակով և փոխադարձ վստահության մթնոլորտում է ապահովվում <<Թավանիր>> ընկերության ազգային կարգավարական կենտրոնի և Ընկերության կենտրոնական կարգավարական ծառայության կարգավարների միջև փոխհարաբերությունների և 220կՎ Ահար-1, Ահար-2 միջպետական էլեկտրահաղորդման գծերի օպերատիվ կառավարման վերաբերյալ կնքված համաձայնագրով նախատեսված պահանջների կատարումը: Պարբերաբար վերամշակվել են արդեն գործողության մեջ գտնվող հրահանգները և տրամադրվել համապատասխան ընկերություններին:

- Սպասարկվել են կապուղիներ, մալուխային և օդային կապի գծեր, ռադիո և այլ հատուկ կապի ու հեռուստամեխանիկայի սարքավորումներ, այդ թվում՝

| | | |
|---|---|---|
| Բարձր հաճախ. սարքավորումներ | 16+18 լրակազմ (PLC+DPLC) | 34 կապուղի |
| Ռադիոռելեական սարքավորումներ | 41 հատ | 41 կապուղի |
| Ռադիոսարքավորումներ «ՖՄ» և «Մայակ» | 32 կայան | 32 կապուղի |
| Մալուխային կապի պղնձյա գծեր | 68 կմ | 116 կապուղի |
| Օդային կապի գծեր | 22 կմ | 16 կապուղի |
| Խտացման սարքեր | 8 լրակազմ | 96 կապուղի |
| Ավտոմատ հեռախոսակայան «Քվանտ» | 1հատ | 98 աբոնենտ |
| Ավտոմատ հեռախոսակայան «ԱՏՍԿ 50/200» | 2 հատ | 105 աբոնենտ |
| Ավտոմատ հեռախոսակայան թվային Panasonic KXTD | 8 հատ | 305 աբոնենտ |

- SCADA/կապ համակարգ, որը իր մեջ ներառում է՝

1. Օպտիկամանրաթելային ճոպան (OPGW ) – 779,7 կմ
2. Օպտիկամանրաթելային մալուխ – (OPAC) – 27.6 կմ
3. Օպտիկական վերջնամասային սարքեր– (OLTE) – 45 հատ
4. Հեռամեխանիկայի սարքեր - (RTU) – 28 հատ
5. Էներգասնուցման անխափան սարքեր՝
   - ✓ Լիցքավորման ագրեգատներ (Golero) – 28 հատ
   - ✓ Ակումուլյատորային մարտկոցներ – 28 կոմպ.
   - ✓ Շարժիչ գեներատորներ EP6000 – 20 հատ
   - ✓ 220 կՎ/ 48 Վ - փոխակերպիչներ – 16 հատ
   - ✓ 48Վ/ 220 Վ - փոխակերպիչներ – 30 հատ
6. SCADA սերվերներ – 10 հատ
7. SCADA – ցանցային Gatalyst սարքեր – 8 հատ
8. Տեսապատ – 1 հատ
9. Տեսապատի պրոյեկցիոն սարքեր – 18 հատ
10. Ժամանակի սինխրոնիզացիոն սարք – 2 կոմպ.
11. Երկարատև ձայնագրման սարք – 1 հատ
12. Անընդհատ սնուցման սարք (UPS) -15 հատ
13. Ռեզերվ ավտոմատ միացման տրանսֆ. համակարգ - 1 հատ
14. Դիզել գեներատոր – 1 հատ
15. IP ավտոմատ հեռախոսային կայան (MX - ONe) – 2 հատ
16. IP ավտոմատ հեռախոսային կայան EBN – 10 հատ
17. IP և թվային հեռախոսներ – 165 հատ
18. Ունիվերսալ չափիչ սարքեր (P130EH) – 477 հատ
19. Հսկիչ մալուխներ – 71.6 կմ
20. Ուժային մալուխներ – 6.35 կմ
21. Թվային կամրջակներ – 30 հատ
22. Համակարգիչներ (SCADA/կապ համակարգում) – 29 հատ
23. Կարգավարի աշխատատեղ – 4 հատ
24. Կապի ցանցային հսկիչ սարք (NMS) – 2 հատ
25. 4/3 լարային փոխակերպիչներ – 16 հատ
26. Միջանկյալ ռելեներ – 1006 հատ

և այլ մոդեմներ, սվիչներ, կոնվերտորներ ու օժանդակ միջոցներ:

Կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Արդիականացվել է «ԲԷՑ» ՓԲԸ «Հյուսիսային» մ/ճ-ի ռելեային ավտոմատ հեռախոսակայանը՝ այն փոխարինելով թվային, ժամանակակից Panasonic KXTD նոր հեռախոսակայանով:
- Արդիկանացվել է «Ղարս» մ/ճ-ի ռելեային ավտոմատ հեռախոսակայանը՝ այն փոխարինելով թվային, ժամանակակից Panasonic KXTD նոր հեռախոսակայանով:
- Կապված «ԵրՋԷԿ» ՓԲԸ նոր ԲԲՍ-ի վերակառուցման աշխատանքների ավարտի հետ, միջանկյալ փուլերից հետո, վերջնական ուղեծրի են բերվել 110կՎ ՕԳ-ի վրա տեղեկայված օպտիկամանրաթելքային ճոպանները, «Հարավային 1,2», «Նորք», «Արարատ-2» գծերը:

  Հին ղեկավարման վահանից նոր ղեկավարման վահան են տեղափոխվել «ԵրՋԷԿ» ՓԲԸ-ում RTU սարքերը և դրվել գործողության մեջ: Կարգավորվել և տեղակայվել է նոր, այդ նպատակի համար նախատեսված, OLTE-STM-4 օպտիկական սարքը, և այն ինտեգրվել է SCADA/կապ համակարգում:

  Անց են կացվել OPAC տիպի օպտիկական մալուխները՝ «ԵրՋԷԿ» ՓԲԸ նոր ԲԲՍ-ից «Նաիրիտ» 110 ԵԿ-ն: Կատարվել է «ԵրՋԷԿ» ՓԲԸ նոր ԲԲՍ-ից «Հարավային» 110կՎ ԵԿ-ն օպտիկական ջիղերի միացում՝ պաշտպանության սարքերի աշխատանքն ապահովելու համար:

  Անց են կացվել նաև OPAC տիպի օպտիկական մալուխները՝ «ԵրՋԷԿ» ՓԲԸ նոր ԲԲՍ-ից դեպի ՀԾԳՑԷ և դեպի ադմինիստրատիվ շենք:
- Ապամոնտաժվել են «ԵրՋԷԿ» ՓԲԸ հին ԲԲՍ-ից հսկիչ մալուխները ղեկավարման վահանից, ունիվերսալ չափիչ սարքերը, միջանկյալ ռելեները՝ վերակառուցման ավարտին վերստին մոնտաժելու համար:
- «Հաղթանակ» 220կՎ ԵԿ-ից վերակառուցման արդյունքում ապամոնտաժվել են հսկիչ մալուխները, ունիվերսալ չափիչ սարքերը, միջանկյալ ռելեները՝ վերակառուցման ավարտին վերստին մոնտաժելու համար:
- «Աշնակ» 220կՎ ԵԿ-ի վերակառուցման պատճառով ապամոնտաժվել են RTU-ն հսկիչ մալուխները, ունիվերսալ չափիչ սարքերը, միջանկյալ ռելեները՝ վերակառուցման ավարտին կրկին մոնտաժելու համար:
- «Կամո» 220կՎ, «Լիճք» 220կՎ ենթակայանները, որոնք SCADA/կապ համակարգ էին ընդգրկված PLC՝ ցածր արագությունների կապուղիների միջոցով, «Հրազդան ՋԷԿ – Կամո – Լիճք - Եղեգնաձոր – Սպանդարյան – Շինուհայր»

օպտիկական ճոպանի շահագործման հանձնվելուց հետո, SCADA/կապ համակարգին են միացվել օպտիկական մանրաթելային գծերով:

- Կատարվել է «Կարմիր 1,2» և «Կիլիկիա 1,2» 110կՎ օդային գծերի նոր տեղադրված հենասյուների վրա օպտիկամանրաթելքային ճոպանի մոնտաժումը՝ կապված ուղեծրի փոփոխության հետ, ճանապարհային շինարարության պատճառով:
- Կատարվել է «Կամո» 220կՎ, «Լիճք» 220կՎ ենթակայաններից հաշվիչների տվյալները հաշվարկային կենտրոն հաղորդման կազմակերպումը օպտիկական ջիղերի միջոցով:
- Կատարվել է «Գեղամավանի» դիտակետում դերիվացիոն ջրանցքից ջրի ծախսի հեռաչափման կազմակերպումը և դրա ինտեգրումը SCADA/կապ համակարգ:
- Կատարվել է Ախպարայի ջրամբարից դուրս եկող դերիվացիոն ջրանցքի ջրի ծախսի հեռաչափման կազմակերպումը և դրա ինտեգրումը SCADA/կապ համակարգ:
- Կատարվել է «Քանաքեռ» ՀԷԿ-ի պատվարից դուրս եկող դերիվացիոն ջրանցքի ջրի ծախսի հեռաչափման կազմակերպումը և դրա ինտեգրումը SCADA/կապ համակարգ:
- Կատարվել է «Ձորա ՀԷԿ»-ի գեներատորների ակտիվ հզորության հեռաչափման կազմակերպումը և դրա ինտեգրումը SCADA/կապ համակարգ:
- Կատարվել է «Տաթև ՀԷԿ»-ի ակտիվ բեռի ավտոմատ կարգավորման համակարգի վերակառուցման աշխատանքները և «Ագարակ» փ/կ-ից դրա համար անհրաժեշտ հեռաչափումների ապահովումը:
- Կատարվել է «Երևան ՋԷԿ» ԵԿ-ում նոր շահագործում մտած ավտոմատ տեղական կառավարման համակարգի ինտերգրումը SCADA/կապ համակարգ:
- Կատարվել է «Չարենցավանի» դիտակետում դերիվացիոն ջրանցքից ջրի ծախսի հեռաչափման կազմակերպումը և դրա ինտեգրումը SCADA/կապ համակարգ:
- Կատարվել է «Նոր Հաճնի» դիտակետում դերիվացիոն ջրանցքից ջրի ծախսի հեռաչափման կազմակերպումը և դրա ինտեգրումը SCADA/կապ համակարգ:
- Կատարվել է «Գետամեջի» դիտակետում դերիվացիոն ջրանցքից ջրի ծախսի հեռաչափման կազմակերպումը և դրա ինտեգրումը SCADA/կապ համակարգ:
- Կատարվել է «Երևան ՀԷԿ-3» գեներատորների ակտիվ հզորությունների հեռաչափման կազմակերպումը և դրա ինտեգրումը SCADA/կապ համակարգ:

Ռեզերվային պահվող համակարգի անխափան աշխատանքն ապահովելու համար վերանորոգվել են՝

| | |
|---|---|
| Ռադիոռելեային «Մալյուտկա» սարքի բլոկեր | 19 հատ |
| Բ/Ղ սարքեր PLC+DPLC | 6 հատ |
| Խտացման սարքերի բլոկեր | 17 հատ |
| Անխափան սնուցման սարքեր (մոդուլներ) | 9 հատ |

Հին սարքավորումներից շահագործման անհրաժեշտությունը կորցնելու կապակցությամբ, հանվել և ապամոնտաժվել են՝ Բ/Ղ սարքավորումներ, անխափան սնուցման սարքեր, մարտկոցներ, АДАСЭ ներ, ռադիո սարքեր, FM 301 կայաններ, խտացման սարքեր և այլ օժանդակ միջոցներ:

Կատարվել են սեզոնային և ձմեռային նախապատրաստական աշխատանքներ:

2018թ. ապահովվել է հանրապետության տարածքում կապի ծառայությունների բնականոն աշխատանքն ապահովող մարդատար և բեռնատար ավտոմեքենաների նորմալ շահագործումն ու նորոգումը:

Մշտական աջակցություն է ցուցաբերվել SCADA/կապ 2-րդ փուլի նախագծային աշխատանքների ընթացքում և մասնակցություն՝ այդ ծրագիրը բարեհաջող ավարտին հասցնելու համար:

## III. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

***(Հաշվապահական հաշվեկշռի Ձև N1 և Ձև N2 կցվում է)***

### <u>***1.Եկամուտներ և ծախսեր***</u>

<u>1.1.Եկամուտներ</u>

1.1.1.Ընկերության տարեկան գործառնական եկամուտը հիմնական գործունեությունից կազմել է 2007.3մլն դրամ (հավելված 1), խորհրդի կողմից հաստատված նախահաշվով նախատեսված 1887.7մլն դրամ գումարի դիմաց (նախատեսվածից ավել եկամուտը կազմել է 119.6մլն դրամ): Նշված եկամուտի գոյացման աղբյուրները հետևյալն են. 1548.8մլն դրամը՝ ՀՀ տարածքում մատուցած ծառայությունների դիմաց (վճարող՝ <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ); <<ԵրՋէկ>> ՓԲԸ-ի կողմից Հայաստան-Իրան ներկրված գազի դիմաց էլեկտրաէներգիայի արտահանման ընթացքում Ընկերության մատուցած ծառայության դիմաց ստացված եկամուտ՝ 374.9մլն դրամ (նախահաշվով նախատեսված էր 269.0մլն դրամ), որպես այլ գործունեությունից ստացված լրացուցիչ եկամուտ՝ 83.6մլն դրամ, բանկի ավանդի տոկոս՝ 12.9մլն դրամ, Աբովյան 27 շենքի տարածքի և օպտիկամալուխային գծերի վարձակալությունից՝ 56.5մլն դրամ, <<ՀԷՑ>> ՓԲԸ-ին մատուցած լրացուցիչ ծառայությունների համար՝ 0.76մլն դրամ, փոքր ՀԷԿ-երին ՌՊԱ դրվածքների հաշվարկի համար՝ 1.8մլն դրամ, <<Էներգաիմպեքս>> ՓԲԸ-ի համար հաշվարկային աշխատանքներ՝ 7.0մլն դրամ, <<Էներգացանցնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ-ի համար հաշվարկային աշխատանքներ՝ 1.5մլն դրամ, դուրս գրված հիմնական միջոցների վաճառքից՝ 1.25մլն դրամ և այլ ծառայությունների համար՝ 1.89մլն դրամ:

1.1.2.Ընկերության ակտիվների վերագնահատման և շնորհների ձևակերպումների արդյունքում ձևավորվել է ոչ գործառնական եկամուտներ՝ 909.1մլն դրամ:

